Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 04.07.2025թ. տրված Նորատուսի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.06.1991թ. թիվ 16 որոշումից քաղվածքը, Ռազմիկ Նիկոլայի Սարգսյանի /ծնված 18.10.1940թ-ին/ դիմումը, «Հայր և Որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի գյուղ Նորատուս Սևանի փողոց թիվ 10 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.18 հա, ինչը փաստացի կազմում է 0.20890 հա, որը Ռազմիկ Նիկոլայի Սարգսյանի /ծնված 18.10.1940թ-ին/ համատեղ սեփականության՝ իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 326.42 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950-1980թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.20890 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**


1. Վերականգնել Գավառ համայնքի գյուղ Նորատուս Սևանի փողոց թիվ 10 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռազմիկ Նիկոլայի Սարգսյանի /ծնված 18.10.1940թ-ին/, Մետաքսյա Գվիդոնի Խաչատրյանի /ծնված 06.02.1947թ-ին/, Արա Ռազմիկի Սարգսյանի /ծնված 18.07.1968թ-ին/, հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.18 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.0289 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.20890 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 326.42 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950-1980թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Նորատուս Սևանի փողոց թիվ 10 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 08
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1133-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի
1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի
ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 122-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցներն
աճուրդային կարգով օտարելու նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 22-ին
հայտարարել աճուրդ .
2. Տրանսպորտային միջոցների համար որպես աճուրդի մեկնարկային գին սահմանել
հետևյալ շուկայական արժեքները.
1) TOYOTA CAMRY 2,4 – 2 300 000 /երկու միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ
2) VAZ 21906 – 1 453 000 /մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար/ ՀՀ դրամ
3) NIVA VAZ 21214 – 813 000 /ութ հարյուր տասներեք հազար/ ՀՀ դրամ
4) MITSUBISHI MONTERO-SPORT-3,5- 1 353 000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսուներեք
հազար/ ՀՀ դրամ
5) GAZ 3102- 501 000 /հինգ հարյուր մեկ հազար/ ՀՀ դրամ
6) GAZ 3110- 145 000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ
3. 2025 թվականի սեպտեմբերի 22-ին կայանալիք աճուրդի աճուրդավար նշանակել
աճուրդային հանձնաժողովի անդամ Արա Գևորգյանին: 4. Սույն որոշումն ուժի մեջ է
մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarhamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1134-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ
ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի
1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի
ավագանու 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 116-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Ագատության
փողոց 1-ին նրբանցք 2-րդ փակուղի 3 հասցեում գտնվող 05-001-0289-0118
կադաստրային ծածկագրով անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու
նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 22-ին հայտարարել աճուրդ:
2. Անշարժ գույքի համար որպես աճուրդի մեկնարկային գին սահմանել 14 009 000
/տասնչորս միլիոն ինն հազար / ՀՀ դրամ:
3. 2025 թվականի սեպտեմբերի 22-ին կայանալիք աճուրդի աճուրդավար նշանակել
աճուրդային հանձնաժողովի անդամ Արա Գևորգյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 օգոստոսի 2025 թվականի N 1135-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Հովհաննես Նիկոլայի Բոստանջանին, Սոֆիկ Վահանի Մարությանին, Էդուարդ Հովհաննեսի Բոստանջանին, Շուշան Սերյոժայի Ամիրխանյանին, Վահե Հովհաննեսի Բոստանջանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, **որոշում եմ**

- Քաղաքացիներ Հովհաննես Նիկոլայի Բոստանջանին, Սոֆիկ Վահանի Մարությանին, Էդուարդ Հովհաննեսի Բոստանջանին, Շուշան Սերյոժայի Ամիրխանյանին, Վահե Հովհաննեսի Բոստանջանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ հասցեում գտնվող 0.532 հա մակերեսով 05-001-1157-0005 կադաստրային ծածկագրով, 0.035 հա մակերեսով 05-001-1114-0085 կադաստրային ծածկագրով, 0.108 հա մակերեսով 05-001-1114-0092 կադաստրային ծածկագրով, 0.09 հա մակերեսով 05-001-1114-0160 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 1.276 հա մակերեսով 05-001-1119-0367 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
- Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
- Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 11
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2025 թվականի N 1136-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 33/2
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00058 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳԼՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ,
ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 08.08.2025թ. թիվ 8 նիստի թիվ 152-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 33/1 հասցեի սեփականատեր Հակոբ Գազիկի Հայրթյանի /ծնված 27.03.1989թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 04072025-05-0004, տրված 04.07.2025թ./, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 33/2 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.00058 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը $5.8 \times 1877.7 = 10900$ /տասը հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով

օտարելու Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 33/1
հասցեի սեփականատեր Հակոբ Գագիկի Հայթյանին:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Արա Գևորգյանին՝
օրենքով սահմանված կարգով Հակոբ Գագիկի Հայթյանի /ծնված 27.03.1989թ./ հետ
կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 33/2
հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ
Գ. Բոշյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2025 թվականի N 1137-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Մ. ԴԱՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00798 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 08.08.2025թ. թիվ 8 նիստի թիվ 154-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Պետրովի փողոց թիվ 2 հասցեի համասեփականատեր Արայիկ Նորիկի Խաչատրյանի /ծնված 26.06.1969թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 04082025-05-0016, տրված 01.08.2025թ./, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ք. Գավառ Մ. Դաշտոյան փողոց թիվ 1/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.00798 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1221 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը $79.8 \times 1221 = 97500$ /իննսունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու Գավառ համայնքի ք. Գավառ Պետրովի փողոց թիվ 2 հասցեի սեփականատերեր Սամվել Խաչատուրի Ենգիբարյանին,

Լուսինե Ալբերտի Սարինգույանին, Արայիկ Նորիկի Խաչատրյանին և Հերմինե Փայլակի Ղանթարյանին:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Սամվել Խաչատուրի Ենգիբարյանի /ծնված 24.05.1976թ./, Լուսինե Ալբերտի Սարինգույանին /ծնված 15.01.1980թ./, Արայիկ Նորիկի Խաչատրյանին /ծնված 26.06.1969թ./ և Հերմինե Փայլակի Ղանթարյանին /ծնված 06.02.1977թ./ հետ կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Մ. Դաշտոյան փողոց թիվ 1/1 հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2025 թվականի N 1138-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13/1 ՀԱՍՑԵՌՈՒՄ
ԳՏԵՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0070 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ
ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 08.08.2025թ. թիվ 8 նիստի թիվ 150-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Հ. Թումանյան փողոց թիվ 27/1 և 27 հասցեների սեփականատեր Արթուր Աշոտի Բոյախչյանի /ծնված 15.07.1987թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 06062025-05-0034, տրված 06.06.2025թ./, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ք. Գավառ Հ. Թումանյան փողոց թիվ 13/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.0070 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը $70.0 \times 1877.7 = 131500$ /մեկ հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով

օտարելու Գավառ համայնքի ք. Գավառ Հ. Թումանյան փողոց թիվ 27/1 և 27 հասցեների սեփականատեր Արթուր Աշոտի Բոյախչյանին:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Արթուր Աշոտի Բոյախչյանի /ծնված 15.07.1987թ./ հետ կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Հ. Թումանյան փողոց թիվ 13/1 հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2025 թվականի N 1139-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Ա. ՈՍԿԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 5/81 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00153 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 08.08.2025թ. թիվ 8 նիստի թիվ 153-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 5/80 հասցեի սեփականատեր Արտյոմ Արայիկի Ցոգոլակյանի /ծնված 28.04.2000թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 11082025-05-0051, տրված 11.08.2025թ./, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 5/81 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.00153 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1221 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը $15.3 \times 1221 = 18700$ /տասնութ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու Գավառ համայնքի ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 5/80 հասցեի սեփականատեր Արտյոմ Արայիկի Ցոգոլակյանին:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Արտյոմ Արայիկի Ցոգովակյանի /ծնված 28.04.2000թ./ հետ կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Ա. Ոսկանյան փողոց թիվ 5/81 հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման և հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1140-Ա

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՅՈՒՐԻ ԱՐՍԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՄԱԼՅԱ ԱՐՍԵՆԻ
ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺՆԵՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2/ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերության դրույթներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13.08.2025թ. նիստի արձանագրությունը, ելնելով անչափահաս երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից,
որոշում եմ

1. Գավառ համայնքի Գավառ քաղաքի բնակիչ Մարիամ Գուրգենի Կարապետյանին (անձնագիր՝ AO 0247723, տրված՝ 13.06.2025թ. 05-ից) թույլատրել՝ վաճառելու ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իր անչափահաս երեխաներ Յուրի Արսենի Պողոսյանին (ծնված՝ 13.05.2014թ., ծննդյան վկայական՝ VII-ՈԿ N 632082) և Ալիտա Արսենի Պողոսյանին (ծնված՝ 01.01.2019թ., ծննդյան վկայական՝ VII-ՈԿ N 630085) պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գավառ քաղաքի Ազատության փողոց 43 շենք 22 բնակարան հասցեի անշարժ գույքի համապատասխան բաժնեմասերը (յուրաքանչյուրին՝ չորս տասնհինգերորդ բաժնեմաս):
2. Սույն որոշումն իմի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1141-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացիներ Անահիտ Կոլյայի Գրիգորյանին, Արմինե Վրույրի Օհանյանին, Մարինե Վրույրի Օհանյանին, Նարինե Վրույրի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից /վկայական N 982598 տրված 2002 թվականի սեպտեմբերի 30-ին, վկայական N 1673079 տրված 2002 թվականի սեպտեմբերի 30-ին / հրաժարվելու մասին դիմումը, **որոշում եմ**

1. Քաղաքացիներ Անահիտ Կոլյայի Գրիգորյանին, Արմինե Վրույրի Օհանյանին, Մարինե Վրույրի Օհանյանին, Նարինե Վրույրի Օհանյանին սեփականության իրավունքով պատկանող գ. Նորատուս հասցեում գտնվող 0.255 հա մակերեսով 05-059-0414-0018 կադաստրային ծածկագրով, 0.0791 հա մակերեսով 05-059-0414-0017 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության խոտհարքները ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1142-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ
ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի
1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի
ավագանու 2025 թվականի օգոստոսի 8-ի թիվ 144-Ա որոշումը, **որոշում եմ**


- Գյուղատնտեսական մթերքների արտադրություն կազմակերպելու նպատակով
Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-1133-0026 կադաստրային
ծածկագրով 9,2174 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողն
աճուրդային կարգով օտարելու նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 23-ին
հայտարարել աճուրդ:
- Հողատարածքի համար աճուրդի մեկնարկային գինը սահմանել 18 934 000
/տասնութ միլիոն ինն հարյուր երեսունչորս հազար/ ՀՀ դրամ:
- 2025 թվականի սեպտեմբերի 23-ին կայանալիք աճուրդի աճուրդավար նշանակել
աճուրդային հանձնաժողովի անդամ Արա Գևորգյանին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1143-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 21) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 8-ի թիվ 8 նիստի թիվ 139-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Երկարաձգել «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2021 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը:
2. Պայմանագրի գործողության նոր ժամկետը սահմանել 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին օրենքով սահմանված կարգով «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքելու 2021 թվականի օգոստոսի 10-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1144-Ա

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 24) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 8-ի թիվ 8 նիստի թիվ 138-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ քաղաքի Ազատության փողոց թիվ 39 բազմաբնակարան շենքի թիվ 37 բնակարանը (նախկին հասցեն՝ ք. Գավառ, Ազատության 16/7) և բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողատարածքի համապատասխան բաժնեմասը սեփականության իրավունքով անհատույց օտարել Լալա Գարսևանի Բրսիկյանին:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին օրենքով սահմանված կարգով Լալա Գարսևանի Բրսիկյանի հետ կնքելու նշված հասցեի անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1145-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) և 21) կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 8-ի թիվ 8 նիստի թիվ 140-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Երկարաձգել «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2020 թվականի հունիսի 08-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը:
2. Պայմանագրի գործողության նոր ժամկետը սահմանել 2027 թվականի օգոստոսի 01-ը ներառյալ:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին օրենքով «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2020 թվականի հունիսի 08-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին համաձայնագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1146-Ա

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, Գավառ համայնքի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատողի հատուկ 14.08.2025թ եզրակացությունը, **որոշում եմ**

1. Գավառի համայնքապետարանի 2025թ.բյուջեով նախատեսված 09 բաժնի 4 խմբի 1 դասի /բարձրագույն մասնագիտական կրթություն/ գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից համապատասխան ուսումնական հաստատությանը տրամադրել դրամական հատուցում Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին ուսման վարձի մասնակի մարման նպատակով

1.Ալլա Իշխանի Շայրիկյան 200 000/երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ

Ընդամենը՝ 200 000 /երկու հարյուր հազար / ՀՀ դրամ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1147-Ա

ՍՆՈՒՆԴԻ ՓԱԹԵԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի, «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովի առ 14.08.2025 թ. եզրակացությունը

1. Գավառի համայնքապետարանի 2025թ. բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի այլ սոցիալական ծրագրեր գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել 17 400 /տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական արժողությամբ սնունդի փաթեթ

1. Անահիտ Վանիկի Պետրոսյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
2. Յաշա Ասծատուրի Սարգսյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
3. Գոհար Սերյոժայի Ավագյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
4. Հասմիկ Յուլակի Բաղեյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
5. Շողիկ Գարեգինի Գափոյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
6. Նոնա Էդուարդի Սաֆարյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
7. Ռիտա Վլադիմիրի Մակարյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
8. Աննա Գևորգի Սաղեյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
9. Մարիամ Սեդրակի Սեդրակյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
10. Դարիկո Վարազդատի Զարդարյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ

11.Սվետլանա Վոլոդյայի Մկրտչյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
12.Սուրեն Մկրտչի Կարապետյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
13.Մարինե Պավլիկի Հարությունյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
14.Գոհար Մուխայելի Արզաքանցյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ
15.Ավիկ Արտուշի Գրիգորյան	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ

Ընդամենը՝ 261 000 /երկու հարյուր վաթսուն մեկ հազար/ ՀՀ դրամ

2. 261 000/ երկու հարյուր վաթսուն մեկ հազար /ՀՀ դրամ փոխանցել <<Դառնա>> ՍՊ ընկերությանը թվով 15 շահառուներին սնունդի փաթեթների մատակարարելու նպատակով:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 օգոստոսի 2025 թվականի N 1148-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԶԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00305 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 08.08.2025թ. թիվ 8 նիստի թիվ 151-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Գր. Լուսավորչի փողոց թիվ 3 հասցեի համասեփականատեր Տիրուշ Պապինի Խաչիկյանի /ծնված 05.01.1950թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 16072025-05-0016, տրված 16.07.2025թ./, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ք. Գավառ Գր. Լուսավորչի փողոց թիվ 3/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.00305 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը $30.5 \times 1877.7 = 57300$ /հիսունյոթ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով օտարելու Գավառ

համայնքի ք. Գավառ Գր. Լուսավորչի փողոց թիվ 3 հասցեի սեփականատերեր Տիրուշ Պապինի Խաչիկյանին, Հայկանուշ Ռաֆիկի Դաբադյանին:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Տիրուշ Պապինի Խաչիկյանի /ծնված 05.01.1950թ./, Հայկանուշ Ռաֆիկի Դաբադյանի /ծնված 05.01.1975թ./ հետ կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Գր. Լուսավորչի փողոց թիվ 3/1 հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 13
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 օգոստոսի 2025 թվականի N 1149-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 05-001-1134-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143 կետով, ՀՀ վարչապետի 2009 թ-ի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային բնակավայրի գլխավոր հատակագծի փոփոխության նախագծի վերաբերալ 30. 07. 2025 թվականին տրված N 2/փ-232 և N 2/փ-233 դրական եզրակացությունները, Գավառ համայնքի ավագանու 08 օգոստոսի 2025 թվականի թիվ 8 նիստի թիվ 155-Ա և 08 օգոստոսի 2025 թվականի թիվ 8 նիստի թիվ 156-Ա որոշումների, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին., թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, **որոշում եմ**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքին սեփականության իրավունքով պատկանող /սեփ. վկայական թիվ 13112024-05-0005/ 05-001-1134-0026 կադաստրային ծածկագրով հողամասի՝ 24 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել Գավառ համայնքի պարզեցված գլխավոր հատակագծում փոփոխության նախագծին՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից փոխել՝ էներգետիկայի, տրանսպորտի կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողատարածքի, իսկ հողամասի գործառնական նշանակությունը՝ վարելահող գործառնական

նշանակության հողատեսքից փոխել էներգետիկայի հողեր գործառնական
նշանակության հողատեսքի:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք ք. Գավառ թիվ 5 հողամաս հասցեն:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում առանալու համար:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 14
ք. Գավառ

